

Շուշիի զարգացման եւ առաջնահերթ միջոցառումների ծրագիր-հայեցակարգ

Հիմնադրամի կողմից մշակված Շուշիի զարգացման և առաջնահերթ միջոցառումների ծրագիր-հայեցակարգը պարունակում է համալիր միջոցառումների կարճաժամկետ և միջնաժամկետ փաթեթ, որը բխում է Շուշի քաղաքի գլխավոր հատակագծի 2007թ. նոր խմբագրության պահանջներից:

Առաջնահերթ ծրագրերը, որոնք նախատեսվում է իրականացնել 2007-2008թթ., հիմնականում ուղղված են քաղաքի հրատապ խնդիրների լուծմանը և շուշեցիների կենսամակարդակը որոշակիորեն բարելավելուն (աշխատատեղեր, բուժապասարկում, տրանսպորտ): Առաջնահերթ ծրագրի իրականացման արդյունքում արդեն կարճաժամկետում Շուշիում կստեղծվի աշխատուժի մրցակցային շուկա, որը ենթադրում է լրացուցիչ աշխատուժի ներկրում: Առաջնահերթ ծրագրերում ներառված են՝ ենթակառուցվածք, շրջակա միջավայր, կառուցապատում և նախագծում, բնակելի ֆոնդ, պատմամշակութային ժառանգություն, տնտեսական և առողջապահական խնդիրներ:

Միջնաժամկետ ծրագիրն ուղղված է Շուշիում տնտեսական այնպիսի ենթակառուցվածքի ստեղծմանը, որը կապահովի ներդրումների շարունակական հոսք և քաղաքի բնակչության շեշտակի աճ: Միջնաժամկետ ծրագրի իրականացման արդյունքում կապահովվի Շուշիի պատմամշակութային ժառանգության լիարժեք պահպանումն ու վերակառուցումը:

